Գործ ԵԴ թիվ 2173/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գնման գործընթացի կասեցումը մասամբ վերացնելու վերաբերյալ

27 մարտի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ԵԴ թիվ 2173/02/23 գործով պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը մասամբ վերացնելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Ռաֆ-Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 1-ին չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Բուլդոզեր բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-9 մոդելի բուլդոզերը» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բուլդոզեր բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի կամ համարժեք»,

բ. 2-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Բուլդոզեր KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-6 մոդելի բուլդոզերը» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բուլդոզեր KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի կամ համարժեք»,

գ. 3-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Էքսկավատորներ բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO

CamScanner

մոդելի, որին համարժեք են համարվում CAT ֆիրմայի CAT330 մոդելի և HYINDAI ֆիրմայի HX300SL մոդելի . էքսկավատորները» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Էքսկավատորներ բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO մոդելի կամ համարժեք»,

դ. 4-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Էքսկավատորներ միջին արտադրողականության KOMATSU ֆիրմայի WB93S մոդելի, որին համարժեք են համարվում CAT ֆիրմայի CAT434F2 մոդելի և JCB ֆիրմայի 4CX մոդելի էքսկավատորները» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Էքսկավատորներ միջին արտադրողականության KOMATSU ֆիրմայի WB93S մոդելի կամ համարժեք»:

Դատարանի 19.01.2023թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել են ապացույցներ, և նշանակվել է դատական նիստ:

01.02.2023թ. պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցիչը դատարան է մուտքագրել հայցադիմումի պատասխան՝ խնդրելով հայցապահանջն ամբողջությամբ մերժել /պատճառաբանվել է, որ հայցվորի փաստարկները չեն համապատասխանում իրականությանը, իսկ պատասխանողը ղեկավարվել է տվյալ գնման գործընթացի ժամանակահատվածում գործող օրենսդրական նորմերով/:

07.02.2023թ. պատասխանողի ներկայացուցիչը դատարան է մուտքագրել «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տիրապետման տակ գտնվող փաստաթղթերը:

24.03.2023թ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Պապիկյանը դատարան է մուտքագրել գնման գործընթացի կասեցումը մասամբ վերացնելու վերաբերյալ միջնորդություն՝ հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով գնման գործընթացի կասեցման վերաբերյալ որոշումը հրապարակվել է 06.03.2023թ. և կասեցման օր է նշվել 06.03.2023թ.: Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթով նախատեսված տեխնիկաների ձեքբերումը հրատապ է, այն բխում է պաշտպանության ապահովման շահերից, և անհրաժեշտություն կա շարունակել գնման գործընթացը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[11]-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Պապիկյանը միջնորդել է վերացնել «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածքագրով փակ նպատակային մրցույթով նախատեսված գնման գործընթացի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների նկատմամբ սահմանված կասեցումը:

Քննության առնելով պատասխանողի միջնորդությունը՝ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

CamScanner

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[11]-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Տվյալ դեպքում հաշվի առնելով պետության պաշտպանության շահերից բխող խնդիրների առաջնայնությունը, նկատի ունենալով, որ ներկայացված միջնորդությունն ուղղված է հույժ կարևոր հարցի՝ պետության պաշտպանության ապահովմանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ միջնորդությունը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[11]-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համահունչ, դատարանը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման. անհրաժեշտություն է առաջացել վերացնելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ և 234.[11]-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի միջնորդությունը՝ ԵԴ թիվ 2173/02/23 գործով գնման գործընթացի կասեցումը մասամբ վերացնելու վերաբերյալ, բավարարել.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթով նախատեսված գնման գործընթացի կասեցումը՝ նույն գնման գործընթացի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, վերացնել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԲԱԴԻՐՅԱՆ

CamScanner